ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով ՀՀ կառավարության 02.08.2018թ. թիվ 878-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետով սահմանված դրույթները՝ որպես ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) ռիսկերի գնահատման և վերլուծության վարչության փորձագետ 7.05.2024թ.-3.09.2024թթ. ժամանակահատվածի ընթացքում ընդգրկված եմ եղել Ծառայության ռիսկերի գնահատման և վերլուծության վարչության կողմից իրականացող գործառույթներին, մասնավորապես՝

1. Իրականացրել եմ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին 2022 թվականի ընթացքում բժշկական սարքավորումների մատակարարման գործընթացների վերաբերյալ վերլուծական աշխատանքները,
2. Վերահսկվող օբյեկտների ռիսկայնության գնահատում ռիսկերի գնահատման և վերլուծության վարչության մեթոդաբանությանը համաձայն կազմել եմ ռիսկային համարվող մարզպետարանների ցանկերը,
3. Իրականացրել եմ ՀՀ վարչապետի 2024 թվականի մարտի 27-ի թիվ 02/09.1/11171-2024 (Mulberry համակարգի միջոցով կատարվող գործընթացների վերաբերյալ) հանձնարարականի կատարման նկատմամբ վերահսկողական աշխատանքներ,
4. Իրականացրել եմ բջջային նույնականացման քարտով, «Ես եմ» ազգային նույնականացման հարթակ մուտք գործելիս և բջջային էլեկտրոնային թվային ստորագրության կիրառելիս՝ վերբեռնվող փաստաթղթերի պաշտպանվածության վերաբերյալ վերլուծական աշխատանքներ,
5. Իրականացրել եմ մշտադիտարկում Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կողմից ՀՀ պետական բյուջեից հատկացված գումարների ծախսման վերաբերյալ,
6. Մասնակցել եմ Ակադեմիական քաղաքի «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի վերաբերյալ իրականացվող մշտադիրակմանը:

ՀՀ ՊՎԾ ռիսկերի գնահատման և
Վերլուծության վարչության փորձագետ Հովհաննես Գասպարյան